ԱԴԱՄ

Մի՛ կարծեր :
Լոկ զարթօնքի սարսուռը դիս պատեր է :
Հեռո՛ւ ասկից, ուր ալ ըլլայ, ո՛վ կին իմ :
Այլեւս օտար եւ ամայի է այս վայր :

ԵՐԿՆԱՅԻՆ ՊԱՐԸ

Արտասուեցէ՛ք եղբայրական արցունքով,
Կը յաղթէ սուտն. — ահա երկի՛րը կորաւ :

(Շար. 2)

Հունգար բնագրէն թարգմանեց

Հ. ԱՆԴՐԷԱՍ ՖՈԿՈՒԼԵԱՆ

ԾԻՐՈՑ ԼԱՐ

Տիեզերքի մեծ բընարին
Երգերն անոյշ լըսեցի.
Սրտի, մտքի բոլոր լարերն,
Յոյսի լոյսով զննեցի :

Բայց, աւա՜ղ, այդ մեծ բընարէն
Լար մը փրթեր է հիմա.
Սիրոյ լարն է, որ ջինջ երգով
Ալ չի՛ հնչեր երկրիս վրայ :

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՆԿԱՐԻՉ Ճ. ՍԱՆԹՈՄԱԶՈՅ

Վենետիկի Գեղարուեստից Կաճառին գլխաւոր ուսուցիչ եւ աշխարհահռչակ նկարիչ՝ Giuseppe Santomaso, *այս աշնան, Ս. Ղազար այցելեց :*

Միջազգային համբաւի տիրացած այս նկարիչը, որուն աշակերտած են եւ կ'աշակերտին հայ նկարիչներ՝ Սուրէն Երէցեան, Լեւոն Ժամկոչեան, Ակեքսան Պէրէճիքեան, ծնած է Վենետիկ, 1907ին : Յաճախած է Վենետիկի Գեղարուեստից Կաճառը՝ զոր մեծ յաջողութեամբ աւարտելէ ետք, 1937էն ի վեր, անձնական՝ անտեսէ ետք, 1937էն ի վեր, անձնական՝ անթիւ ցուցահանդէսներ կազմակերպած է Եւրոպայի, հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներու գլխաւոր կեդրոններու մէջ : Մասնակցելով միջազգային հաւասարական ցուցահանդէսներու, արժէքաւոր մրցանակներ շահած է, մասնաւորապէս 1954ին՝ Վենետիկի նշանաւոր երկամեայ (Biennale) *ցուցահանդէսին, մեծ նկարիչի եւ մասնաւորապէս վարպետ զարդանկարիչի* (décorateur) *անուն մը ապահովելով : Իր նկարները փայլուն տեղ մը գրաւած են աշխարհիս քանեւերեք մեծ գաղաքներու թանգարաններուն մէջ :*

Սանթոմազոյ առաւերապէս մշակած է վերացական նկարչութիւնը : Հետեւելով Kandinskyի *բացած ուղիին, անիկա՝ վենետիկեան արդի նկարչութեան մէջ կատարած է այն գերը, որ* Joan Miró *բրած է սպանիականին մէջ :*

Մեր մտերիմ տեսակցութեան ընթացքին, Սանթոմազոյ, որ հակառակ իր համբաւաւոր մէկը ըլլալուն, վերջին աստիճան համեստ է եւ համակրելի, խանդավառ չեչտով, գրեթէ վերացած, սկսաւ պարզել նկարչութեան մասին ունեցած իր գաղափարները :

© National Library of Armenia